

ԳՈՐԾՎԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԵԽ ԳՈՐԾՎԴՐՈՒԹԵԱՆ ԵՊԱՆԱԿԸ: \*

**Մ**եղանում քարոզ է կոչուում այն ամենը, ինչ որ հոգեսորականը խօսումէ եկեղեցում, լինի դա մի միջնադարեան առասպեկ կամ մի ժողովրդական առակ զուարձախօսութիւններով համեմած, թէ ազգասիրական ճառ, լրագիրներից սովորած իմաստութիւն կամ գիտութեան և արուեստի վերաբերեալ սխալ ուղիղ մի տեղեկութիւն: Մեր ժողովուրդը ոփում է արգարե և մեծ պահանջ ունի քարոզ լսելու, բայց այդ պահանջին բաւականութիւն տուած չենք լինի, եթէ միայն քարոզութիւնների թիւն աւելացնել աշխատենք առանց նոյս բովանդակութեան վերաց ուշադրութիւն գարձնելու: Հարկաւոր է, որ թէ քարոզների և թէ ունկնդիրների համար պարզ լինի ինչ է քարոզը և ինչ կերպով պէտք է տրուի: Շատ բան կարող է գրաւիչ հետաքրքրական օգտակար նոյն իսկ լինել բայց եկեղեցում խօսուելով միայն քարոզ չի գառնայ: Շատ լաւ է, եթէ մի հոգեսորական իւր իմացածով ժողովրդին հետաքրքրել, նորան օգտակար տեղեկութիւններ տալ կարող էր բայց գորա համար, նա ուրիշ միջոցներ պէտք է գտնէ, եկեղեցու բեմի վերաց նո Աստուծոյ խօսքի թարգմանն է և իւր բոլոր ասելիքը այդ աղբիւրից առնել պարտաւոր է:

Աստուծոյ խօսք ասելով սովորաբար ո. Գիրքն ենք հասկանում իրեւ ծշմարիտ յայտնութեան վաւերական յիշատակարանը, այս տեղ գրի է առնուած այն, ինչ որ Աստուծոյ գարեր առաջ խօսել է, ինչ որ իւր մարգարեների և իւր Միածին նրգու բերանով մարդկանց յայանել է կամեցնել: Որպէս զի Աստուծոյ մեր ժամանակի մէջ, մեր միջոցով խօսան լինի՝ բաւական չեն, որ մենք ո. Գիրքը կարգանք միայն ժողովրդի առաջ, թէ կուզ կարգանք ու թարգմանենք կամ բացարենք հարկաւոր է որ նախ քարոզիք ինքը ո. Գրքի առածը իրեւ Աստուծոյ խօսք ընդունէ, ապա քարոզի միջոցով Աստուծոյ խօսք դարձնէ նաև ունկնդիրների համար: Այս տեսակէտից քարոզի նիւթը շատ բազմակողմանի

կարող է լինել. Հարկաւոր է միայն առմի ջապէս աստուածային յայտնութիւնից առած լինի այն սկզբունքը, որի ներքոյ կարգաւորած է այդ նիւթը և որով առաջնորդուումէ ինքը քարոզիքը: Նորա գլխաւոր արժանիքն այն հաւատան է, որ իւր խօսքին կենդանութիւն և ուղղութիւն է տալիս: Աչ ոք ի հարկ է նորա սիրով քննել չէ կարող. թէ որքան կենդանի է նորա հաւատը պատասխանաւու է նա միայն իւր խօնի, իւր ծիրոջ առաջ բայց համայնքը իրաւունք ունի պահանջելու նորանից, որ նա իւր կոչմանը հաւատարիմ մնայ՝ չափելով իւր ամեն խօսքը այն չափավու որ քրիստոնեայ ժողովուրդը իրեւ ծշմարիտ յայտնութիւն է ընդունում: Այդ չափը Քրիստոս ինքն է՝ իւր կատարեալ անձնաւորութեան օրինակով իւր խօսքովն ու գործով իրեւ իսկական ծշմարտութեան միակ վարդապետ, իրեւ կատարեալ տիպոր աստուածահանոյ կեանքի: Աակայն Քրիստոսի թօղած ժառանգութիւնը զանազան ժողովուրդներ տարբեր կերպով են սեպհականել իրենց տարբեր եկեղեցիները իրենց առանձնայատուկ եղանակն ունին նորա վարդապետութիւնը խօստավանելու: Եկեղեցու ծշմարիտ պաշտօնէի պարտքն է իւրացնել այն եկեղեցու տեսակէտը, որին նա ծառայում է և այսպէս՝ չաւատարիմ մնալով հայրերի աւանդին, հաւատարմութեան շաւզով առաջնորդել նա և իւր ունկնդիրներին:

Նա արգարե իւր հավուած ժողովրդի ռաջանորդ քարոզիքը և ուսուցիչն է և անհրաժեշտ է, որ վարդապետական ձիրք ունենայ իւր պաշտօնը յաջողութեամբ կատարելու համար, բայց երբէք չափետք է մոռանայ, որ հաւատացեալ քրիստոնեաների հետ գործ ունի և այն հեղինակութիւնը, որ գործ է գնաւմ՝ իւր միջնորդութեամբ քարոզած Աստուծոյ խօսքին է և ոչ իւր սեփականը: Ուրեմն նա պէտք է բարձրից չնայէ, արհամարհանքով, իրեւ գիտուն՝ տգէտների վերայ, իրեւ հաւատացով՝ անհաւատների վերայ, թող յանդիմանէ և պախարակէ նա ընդհանուր մելքեր ու մասնաւոր զանցառութիւններ, բայց անձնական վիրաւորանք չհացնէ. Աստուծոյ խօսքը իրեւ իւր իմաստութեան արդիւնք, իրեւ մի նոր բան չներկայացնէ, այլ համարելով այն հաւատացեալ ժողովրդի սեփականութիւն, կենդանացնէ և արծարծէ նորա ունեցածը: Լաւ կարող է քարոզը այն ժամանակը համարուել երբ ունկնդիրների սրաւում զղաւումն է յառաջ բերում և հաւատ արծարծում: իսկ այդ կը

\* Ներկայ յօդիածի առաջնորդող մոքերը քաղուած նմ ուսուցիչ Մաքրութի համայստանի պրոֆեսոր Աթելիսի Գործնական Աստուածաբանութիւն, զրից, որ իւր տեսակի մէջ նորագոն աղբիւրը կարող է համարուել եւ լաւագուներից մէկը:

լինի այն ժամանակ միայն, երբ նոյն ներգործութիւնը տեղի է ունեցել նախապես քարոզվի սրտում, երբ քարոզիչը իւր խօսքը վերջացնելուց յետոյ երկունքից ազատուածի պէս է զգում իրեն և այն բերկրառիթ զի տակցութիւնն ունի, թէ Տիրոջ մի ծառայութիւն է մատուցել:

Այս սկզբունքները որոշելուց յետոյ՝ պէտք չէ մոռանալ, որ քարոզն էլ ինչպէս ամեն մի խօսուածք՝ կենդանի և ազգու լինելու համար պէտք է հետեւ ճարտասանութեան կանոններին, ճեւակերպելով նոցա ի հարկ է իրեն յատուկ բովանդակութեան և նպատակի համաձայն։ Կանոնները վերաբերումն մասամբ քարոզածի նիւթին, մասամբ Ճեւին, որով և երկու կարգի են բաժանուում։ Նիւթի կողմից առաջին կանոնն է՝ միւրթին խօսեցածի մէջ։ Քարոզիչը պէտք է որոշ կերպով իմանայ, թէ ինքն ինչ է կամենում և զորա համեմատ առէ միայն այն, ինչ որ քարոզի նպատակներն ծառայուում է և ճանապարհից չէ շեղուում։ Այսուհետեւ՝ նա պէտք չէ այնպիսի ընդհանուր բնաբան ընտրէ, որի ներքոյ ամեն ինչ ասել և ամեն ինչ հասկանալ կարելի է, և ոչ այնպիսի մասնաւոր, կամայական մի բան, որից ունինդիրները ոչ մի որոշ եղանակացութիւն հանել չեն կարող (օր. Մի քանի խօսք կեանքի մոսին և լի.։)։ Մինչդեռ սովորական ատենախոսները մի անցողական նպատակ ունենալով, անձնական օգափի համար մի համոզում յառաջ բերել ցանկանալով՝ յաճախ զանազան գրգռիչ միջոցներ են գործ գնում, քարոզիչը որ մի տեսական բարոյական նպատակ աջքի առաջ ունի, անձնաւորութիւնները կրթել է կամենում և ոչ թէ իւր համար գործիք դարձնել։ պարաւառոր է խոյս տալ ամեն տեսակ աններելի միջոցներից, որոնցով ժողովրդին հետաքրքրել գրաւել կարելի է։ Միենայն բանը ի հարկ է նա պէտք չէ շարունակ կըրկնէ, ձանձրալի դարձնէ։ բայց միշտ նոր բան ասած լինելու համար էլ պէտք չէ արտաքին, արուեստական միջոցների դիմէ, այլ եթէ կարող է նոյն իսկ հինք նոր ուժով, նոր օրինակներով կենդանի կացուցանէ։ Քարոզիչը ճշմորտախօս պէտք է լինի, նայն իսկ բատերեւութիւն մանր բաների մէջ, առած նիւթը նպատակի համաձայն չճամանէ, չգեղեցկացնէ, մասնաւորը ընդհանրացնէ, փոքրը ճենացնէ, չափազանցութիւնների մէջ ընկնէ, և որ զիս ուորն է առէ այն միայն, ինչ որ իւր համոզմանքն է, ինչ որ խզմի առաջ արդարացնել կարող է և պարզ երեսով Աստուծոյ

և մարդոց առաջ հրապարակ հանել, և ապէտք է համակերպի իւր հասակին և զիրքին։ Երիտասարդը չխօսէ այնպէս, որպէս ծերին է վայել քահանան եպիսկոպոսի իրաւունք քանուցնէ, ամեն ոք իւր սրտի գանձից մաս հանէ և ոչ թէ օտարի կողապատով զարգարուի, սակայն զինի թէ երեք իւր անձր քարոզի առաջնորդնէ, օտարից փառք որոնելով և իւր քարոզածի համար սեփական ականջները փակ պահելով, Աւետարանը միայն պէտք է ընդիմի բարձր լինի և նորա լուսով մէջ սովորաբար այդպիսի յարմարութիւն չէ ընծայում, Բերեկեցին իւր ժամերգութեան մէջ սովորաբար այդպիսի յարմարութիւն չէ Ս. Գրքից մի առաջուածք աւնել և նորանով առաջնորդուել մենք միշտ կարող ենք, և շատ լաւ է, եթէ ամեն անգամ այդպէս անենք, որով հետեւ այդպիսով աւելի ապահով կարող ենք լինել թէ յայտնութեան ցոյց տուած ճանապարհի վերայ ենք։ Աստուծոյ խօսքն ենք վերարտապրում, կարեւոր չէ սակայն, որ Աստուծոյ խօսքն անպատճառ ո. Գրքի բառերով արտասանուած լինի. անընդհատ վիայութիւններ ըերելլ ո. Գրքից, առանց նոցա իմաստը խօսապէս ըմբռնած լինելու և ունկնդիրներին ըլքունել տալու՝ ձգում է ընդհակառակն Տիրոջ խօսքի հեղինակութիւնը և ոովորեցնում խաղալիք գարձնել երկնքի արքայութեան մարգարիտները։ Ամեն մի ճշմարիտ քրիստոնեայ պատմական անցեալից, մասնաւորապէս մեր Եկեղեցու ամեն մի հայր, որի համար կարելի է ասել, թէ Աստուծոյ խօսքը կենդանի է եղել նորա մէջ կարող է իւր անձովն ու գործով մեզ իրեւորնակ ծառայել մեր քարոզին նիւթ տալ, Այդպէս նաև ներկայ կեանքի իւրաքանչիւր հանգամանք, ուր աստուծային պատուէրներից մէկն ու մէկի գործագրութիւնն ենք տեսնում, իսկական, հոգեւոր քարոզին նիւթ է մեղ համար։ Զարկաւոր է միայն լաւ նայել, լարած ուշադրութեամբ ականջ զնել՝ թէ ինչպէս է խօսում ինքը Տէրը իւր հետեւողների ըջանում, ինչպէս են խօսում առաքեաները իրենց ժամանակի համար, և աշխատել՝ ոչ նոյն ձեռով, որովհետեւ ձեւը ժամանա-

նակի և հանգամանքների չետ փոխուումէ, բայց նոյն հօգուվ խօսել, նոյնպէս կենդանի նոյնպէս անպաճոյն թէ և ամենաբարձր արուեստի ռանդի շրջապատող կեանքի պայ մաններից անմիջապէս ըղխած:

Նիւթի և նպատակի համեմատ քարոզը կարելի է զանազան աեսակների բաժանել: Սովորաբար Յ տեսակների են բաժանում. վարդապետական, երբ սովորեցնեն է գրլիստոր նպատակը՝ յորդորական, երբ յաւզել կամքը շարժել, մի որոշ համոզմունքի բերել պէտք է յուսադրական, երբ քարոզից աշխատումէ երանութեանց աշխարհը նկարագրել զարթեցնել ջերմեռանդ զգացումներ՝ այդ աշխարհը ընդգրկելու, նորաժառանգութեան յուսով միխթարուելու: Խոկապէս ամեն մի քարոզի մէջ այս երեք տարրերն էլ պէտք է լինեն, բայց նայելով թէ որն է գերիշողը՝ նորա համեմատ էլ պէտք է ոճ գործածել:

Քարոզի նիւթը կամ ուղղութիւնը որոշելու համար նշանակութիւն ունին զանազան արտարին հանգամանքներ. օրինակ՝ տարուայ մէջ կատարուած տօները, որոնցից իրաքանչիւրը իրեն պատշաճ քարոզն ունի եկեղեցական խորհուրդներն ու ծէսերը, որոնք նոյնպէս իրենց յարմար բացատրութիւն են պահանջում: սակայն գժուար է այսաւել ամեն մի հանգամանքի համար առանձին կանոն զնել. կեանքի փորձը և անձնական խորհուրդներն կթելազրեն բոլդի համապատասխան ասելիքը: Առանձին ուշագրութեան արժանի են այն պայմանները, որի մէջ գտնուումէ համայնքը կրթական, տրնտեսական, բարոյական, կրօնական տեսակետից. մի քարոզ, որ շատ գեղեցիկ է քաղաքում՝ կրթուած, չարուստ, բարեպաշտ և բարոյական ժողովրդի առաջ, կարող է բոլորին անօգուտ լինել գիւղում՝ հոգւով կամ մարդու չքաւորների համար:

Գալով քարոզի ձեւական կոզմին կամ քարոզութեան եղանակին՝ առաջին կարեւոր պայմանը պէտք է համարել նախապատրաստութիւնը: Արդարեւ կան հանձարի տէր, առանձնաշնորհչեալ մարդիկ, որոնք յանպատրաստից խօսել կարող են և երբեմն առանձնապէս լաւ են խօսում: բայց նախ՝ այդ բնդի հանուր օրինակ գառնալ չէ կարող, և ապա նոյն իսկ այդպիսիների համար խօսածը ըստ երեւութիւն միայն յանպատրաստից է, մինչդեռ իրապէս երկար ժամանակի մասձութեան և փորձութեան արդիւնք է լինում: Սովորական մարդիկ քարոզը տալուց առաջ

պատրաստ պէտք է ունենան, եթէ չեն կամենում կարճ միջոցից յետոյ եղած նիւթը սպառել և գատարկախօս գառնալ: Խոկ պատրաստութիւնը կարելի է կամ մոքում ծրագիր կազմելով և գլխաւոր գաղափարները դասաւորելով, կամ գրութեան միջոցով: Ումանք առաջին ձեւն են գերագասում: Համարելով թէ գիրը խօսքի ազատութիւնը կաշկանդումէ, կենդանութիւնը խանգարի է, մասնաւոր անհաների համար ճշմարիտ լինել: ընդհանրութեան, մանաւանդ նորավարժների համար, գրելու օգուտները ակներեւ են և բազմազիմի: Գրելը միջոց է տակիս մոքերն ամփափելու, կեգրոնացնելու, սեփական քննադատութեան ենթակելու, շատթերութիւններ ուրիշներին ցոյց տալուց առաջ անձամբ տեսնել: Նիւթն այսպէս աւելի բաղմակողմանի և խորազնին կերպով է մշակուում: Լեզուն աւելի ճախ և ընտիր՝ արտասանութիւնն աւելի հանգիստ և ապահով է լինում: Պատահական գիւղուածներ, տկարութիւն, մի անախորժ լուր կամ իրարանցում աւելի գժուարութեամբ կարող են այստեղ խանգարել քարոզին: Նոյն իսկ գործի վեհաչութիւնը և կարեւորութիւնը պէտք է ստիպէ վերջինիս որքան կարելի է զգոյշ և կանխանկատ լինել:

Նախապատրաստութեան ամենակարեւոր կէտն է բնարան գտնելը, այսինքն այն նախագասութիւնը, այն էական միտքը, որ քարոզին իւր քարոզով հաղորդել է կամենում ունկնդիրներին: Այդ միտքը կարող է ս. Գրբքի բառերով արտայայտուել, բայց կարելի է նա և ս. Գրքի մի հատուածը, մի խօսքը յառաջ բերելուց յետոյ, այն տեղից մի յառաջաբանով ընաբան հանել որքան կարելի է կարճ, ազգու, հեշտութեամբ պահուող միշտութեան մէջ: Բնաբանը կամ սկզբից և եթ որոշումէ այն նիւթը, որի մասին պէտք է խօսուի և կամ առ կախ է թողնում խրնդիրը, որպէս զի քարոզի վերջում միայն ունկնդիրը լսէ իրեն համար մութ մնացած հարցի պատասխանը: Երկու գէպքում էլ հարկաւոր է բնաբանը տալուց յետոյ նորան մասերի բաժանել և այսպէս խնդիրը զանազան կոզմերով լուսաբանելուց յետոյ, վերջը եզրակացութիւն հանել: Բնաբանը կարող է մի հաստատոն առաջադրութիւն լինել (օր. հաւատն ամենակարող է), այն ժամանակ մասերը կտան այդ առաջադրութեան հիմունքները, մի հարց լինել (օր. Երբ կգայ երկնքի արքայութիւնը), մասերը պէտք է պատասխան գտնեն. մի պահանջ լինել (օր.

դուք ևս սուրբ եղեք), մասերը պէտք է դրդիչ պատճառները սրոշեն: Կարելի է առաջ մասերը գտնել կարգաւորելով մոքի մէջ ունեցած նիւթը և ապա նոցանից բնաբան հանել, կամ կարելի է բնաբանը պատրաստի ունենալ և այն տեղից մասեր հանել: Առաջին զէպքում աւելի աշխատութիւն է հարկաւոր, երկրորդ զէպքում՝ ստեղծական միտք: Յամենայն գէպս պէտք է բնաբանի և մասերի մէջ տրամաբանական կապ պահպանել: Բաժանումը պէտք է լոկ մեքենայական զինի. (օր. ընազան՝ սէրը երկայնամիտ է. Ա. մաս՝ սէր, Բ. մաս՝ երկայնամութիւն): Բնաբանը պէտք է նոյնութեամբ մասերից մէկի մէջ չկրկնուի, և ոչ մի մասի միտքը միւսի մէջ: Մասերի թիւը որաշել քարոզչի կամրից է կախուած, բայց փորձը ցոյց է տալիս, որ չորսից աւելին խանգարում: Գրուում է ունկնդիրների ուշագրութիւնը: Բողոքական քարոզչիները սովորութիւն ունին առ հասարակի յայտնել որոշ կերպով ուր պետք է, թէ որն է իրենց բնաբանը, որոնք մասերը, որպէս զի ունկնդիրները ուշագրութեամբ կարողանան հետեւել իրենց մոքերի զարգացմանը: Ա. յդ սովորութիւնը գուցէ շատերի վերայ անախորժ տպաւորութիւն կիթողնէ, կենդանի խոսքի մէջ մի տեսակ մեքենայութիւն մոցնելով, բայց մեր ժողովրդի համար նորա օգտակար կողմը աւելի մեծ կլինի: Քանի որ այստեղ քարոզները շատ յանախ չեն կրկնուում և գեղարուեստական տպաւորութիւնից առաջ ուշագրութիւնը կեղքոնացնելու և մի բան համար կացնելու պիտի ծառայեն: Քարոզի համար բնաբանը և նորա մասերը որոշ ունենալ ամեն գէպքում կարեռը է, եթէ հարկ ևս համարէ մի առ մի թուել նոցա համայնքի առաջ. այդպիսով նա աւելի հեշտութեամբ քարոզի միութիւնը պահած կլինի և աւելորդաբանութիւնների ու կրկնութիւնների մէջ չի ընկնի:

Ամեն քարոզ ունի իւր ներածութիւնը, որի նպատակն է ուղղել ուշագրութիւնը ընտրած բնաբանի վերայ և ցոյց տալ այդ ընտրութեան հիմունքները: Եթէ քարոզի սկզբում ս. Գրքից մի ասացուած յառաջ ըերուել կամ կարգացուել է՝ ամենից յարմարը կլինի այդ տեղից էլ առնել խօսքի թելը և կապել բնաբանի հետ. եթէ ոչ՝ կարելի է սկսել օրուայ հանգիսից, համայնքին զբաղեցնող մի խնդրից, ժամանակակից մի նշանաւոր զէպքից և լ. միայն հարկաւոր է անպատճառ, որ այս յառաջաբանի նիւթը ունկնդիրներին լաւ ծանօթ լինի, նոցա յիշողութեան

մէջ թարմ լինի: Առանձին պահանջ կայ այստեղ ինամբով կշռելու իւրաքանչիւր խօսքը, որսվհետեւ ունկնդիրներին գեռ հետաքրքրել տաքացնել պէտք է. խոյս պէտք է տալ անտեղի ոգեսրութիւնից, մի գուցէ եղած վառօքը այստեղ և եթ սպառի. ներածութիւնը շատ շատ ամբողջ քարոզի 1/3 մասը միայն պիտի կազմէ:

Բուն քարոզի մասերը իրար հետ կապուում են մի թեթև անգումով, որ ճարտար քարոզիները զիսեն աննկատելի դարձնել: Իրեւ անցում կարող է ծառայել գործածած վերջին խօսքերից մէկը, ճարտասանօրէն տրուած մի հարց, մի պատկեր և լն: Աղջեցաւթիւն անելու գլխաւոր միջոցն է ի հարկ է քարոզի անձնական օրինակը, որով իւրաքանչիւր ունկնդիր զգումէ, թէ նա իւր ասածի տէրն է. սակայն այդ նպատակի համար կարելի է ապացուցման զանազան եղանակներ գործ դնել: Ա. յդ պէս 1) տրամաբանական եղանակ, ուր դրական ճանապարհով ասածի ուղիղ հետեւանդներն են ցոյց տրուում կամ բացասական ճանապարհով հակառակ եղանակութեան անհետեթ արդիմքները. 2) փորձնական եղանակ, ուր քարոզիքը մանաւանդ եթէ նու լաւ ծանօթ է համայնքի ներքին կեանքին, նոյն իսկ համայնքի խրզմանքը իրեն վկայ է ըռնում: 3) պատմական եղանակ, ուր անցեալի օրինակը խօսքի հաստատութեան համար ծառայում է (օր. Գործք Առաքելոց ի մէջ ըերած ճառերը): Ա. յն եղանակացութիւնը որ ամբողջ քարոզից հանել պէտք է, տրուումէ մի առանձին վերջաբանով, որտեղ ուրեմն նոր մոքեր այլ ևս յայտնել պէտք չէ, այլ դառնալով ներածութեան կամ բնաբանին՝ աշխատել տրպաւորել գլխաւոր մոքերը ունկնդիրների լիշողութեան մէջ:

Այն ձեւերը, որ բովանդակութեան կամ լեզուի կողմից, գործ են զրուում քարոզը կենդանի կացուցաներու համար՝ մեծ մասամբ նոյնն են, ինչ որ պահանջուումէ ընդհանուր ճարտասանութեան կանոններով: Ամենից աւելի ուշագրութեան արժանի է այն կանոնը, որի գեղեցիկագոյն օրինակները տուել է իւրքը ֆրկիքը իւր առակաւոր քարոզներով. աշխատել որքան կարելի է վերացական, ընդհանուր մոքերին իրական, անհատական գոյն տալ. պատկերներով, օրինակներով շօշափելի կացուցաներ: Մասնաւորապէս լեզուի նըկատմամբ պէտք է, մանաւանդ մեր քարոզիներից, պահանջել որ առհասարակ ըստ կարելոյն պարզ լինի և ունենայ ամբոփի, գիւր-

ըմբռնելի գարձուածներ. բնական լինի, ազատ տեսակ տեսակ խրթին ճանան բառերից և մանաւանդ անտեղի գաւառաբանութիւններից և գոհէկաբանութիւններից: Պէտք է չմոռանալ, որ շատ մեծ տարբերութիւն կայ ժողովրդական և զոհնկավան բառերի մէջ և որ Տիրոջ խօսքի սրբութիւնը անվայել արտապայտութիւններով անարդէ ոչ ոքի իրաւունքը չէ: Ա. Գրքի ոճին հետեւը կարող է այդ գէպքում շատ անտեղութիւններից պահել միայն թէ հետեւողութիւնը կուրօրէն, բառացի գարձուածներ կրկնելով չինի, այլ նոցա ոգուն համաձայնելով: Լեզուին գեղեցկութիւն, նիրգաշնակութիւն և ոյժ տալ երբէք անփոյթ առնելու չէ: Քարողի յաջողութիւնը մեծ կախումն ունի գորանից:

Անգղիսյում քարոզը սովորաբար կարգում են, սակայն բերան ասելու առաւելութիւնները յայտնի են. և մեր մէջ, ինչպէս ամեն տեղ, զա այնպիսի ընդհանուր սովորութիւն է, որ պաշտպանութեան կարիք չունի: Քարողի միջոցին կանգ չառնելու համար լաւ է գրածը բառ առ բառ բերան անել. բայց որպէս զի կենդանի խօսքը սերտած դասի չփոխութիւնը հարկաւոր է նախ իրական մասը, բովանդակութիւնը մտքի մէջ ամփոփել ապա բառերի վերայ ուշազրութիւն դարձնել: Յայտնի է թէ քարոզի ներգործութիւնը որքափ կախումն ունի արտասանութիւնից: շատ վարժութիւն և տակտ պէտք է, որպէս զի իւրաքանչիւր խօսք իւր իմաստին համասպատասխան արտապայտութիւն գտնէ: Հարկաւոր է նախ, որ իւրաքանչիւր ունինդիր ասածը լսել կարողանայ, բայց դորա համար բարձր խօսելը միայն բաւական չէ: անտեղի կանչուտելը ընդհակառակն շատ անգամ խանգարում է լսողութեան. Հարկաւոր է իւրաքանչիւր խօսքը, իւրաքանչիւր տառ պարզ արտասանել ծանր, բայց բնական չափերը պահելով, տաքանալ միայն ուր պէտք է և ուր անկեղծ զգացում ներից է դա յառաջ գալիս. շեշտել բառերն ու նախադասութիւններն այնպէս, որ կարեւորն երկրորդականի մօտ աչքի ընկնի:

Արտաքին շարժումները շատ կարեւոր են խօսքին կենդանութիւն տալու համար, միայն պէտք է բնականութեան և վայելութեան սահմաններից գուրս չելնեն:

Կ. Ա.

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿԱՆ

1. ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ.

Այս զարմանալի հոգեոր զինուորութիւնը, որ գարերից ի վեր կազմել է պապական եկեղեցին, ամենայն տարի նորանոր փորձեր է անում Հռովմի քահանայապետութեան իշխանութիւնը տարածելու և ամրապնդելու:

Մի հողմը թողնելով այս անընդհատ ձգտում ների արտապայտութիւնը, որով պապը ցանկանում է վերականգնել 1870 թուից ի վեր իւր կորցրած մարմնաւոր իշխանութիւնը, մեծ հոգս է տարածում այժմ պապի եկեղեցական իրաւասութիւնը տարածելու մասին:

Արևմտեան երկներում պապը հետզհետէ կորցնելով իւր յենակէտերը, աչք է ձգել արևելքի վերայ:

Արարատի ընթերցողներին յայտնի է արգէն պապի անցեալ տարուան առաջին շրջաբերականը (Pracelara Gratulationis), որով արևելեան եկեղեցիք հրաւիրում էին միանալու լատին եկեղեցու հետ: Այս հովուականին յաջորդեց և գործնական փորձը, արևելեան միացեալ եկեղեցիների ներկայացուցիչների ժողովը:

Այս ժողովին յաջորդեց Լեռն ԺՊ. պապի երկրորդ նշանաւոր հովուականը, որ իւր սկզբի բառերից առնուած անունով «Dignitas ecclesiarium orientalium, (Պատիւ արևելեան եկեղեցեաց)» է կոչուում:

Այս հովուականը մի շատ նշանաւոր վաւերաթուղթ է, որով հետև սրանով միանգամ ևս ապացուցանուում է, թէ լատին եկեղեցին որոշ նպատակների հասնելու համար չէ խորշում և այնպիսի միջոցներից, որոնց նա դարերի ընթացքում հակառակ է ընթացել: Այդ պապական կոնդակը արդարապէս առաքելական «սահմանադրութիւն» անունն է ստացել որովհետև դրա մէջ որոշուած են այն զիջումները, որ Պապական եկեղեցին անում է միացող եկեղեցիներին:

Լատին եկեղեցին, որ գարերի ընթացքում հակառակել է ազգային եկեղեցիների գոյութեան, ազգային լեզուների դործածութեան, այժմ հրապարակաւ յայտնուում է, որ կամենում է տար եկեղեցիների ինքնուրոյնութիւնը Շանաչել իւր իսկ գերիշխանութեան տակ:

Եթէ ամսաթերթիս էջերը ներին, առաջ կը բերենք այդ սահմանադրութեան կէտերը, սակայն պէտք է աւելացնենք, որ ինչպէս այլ արևելեան